№ 124 Երեքշաբթի Նոյեմբերի 4 — 1886 — Երեքշաբթի Նոյեմբերի 4 № 124

ՏԱՍՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
խրատանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Իդական պրօլէտարիատ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մատենագրութիւն. Նամակ Մեծ-Ղարաքլիսայից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բոլգարական խնամակալութեան ճառը. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մի տարի Շվէյցարիայում.

ԻԴԱԿԱՆ ՊՐՕԼԷՏԱՐԻԱՏ

III

Մենք ասեցինք որ հայ օրիորդները իրանց ուսումը մեր իդական դպրոցներում աւարտելուց յետոյ, մոլորված են մնում։ Գործնական ոչինչ հմտութիւն նրանք չեն ստացել, որպէս զի կարողանան իրանց ձեռքի աշխատանքով յապրելու, իսկ մի և նոյն ժամանակ դպրոցը ծնեցրել է նրանց մէջ աւելի լայն, աւելի ընդարձակ կենսական պահանջներ, որոնց բաւականացնելը նրանք անկարող են, որքան էլ ուզենային։

Եւ ահա, մի անգամ ոտքը կոխելով այդ իրանց համար նոր, տենչացած կեանքի շաւղի վրա, որից մի կողմից նրանք յետ քաշվել այլ ևս չեն կարող, չեն էլ կարող նորից վերադառնալ իրանց ստոր շրջանի ընտանեկան և հասարակական միջոցները, միւս կողմից միջոց չունեն շարունակել ընթանալու հաստատ քայլերով նոյն շաւղով,—կիսակիրթ, ուսման և աւելի յարմար կեանքի մի անգամ ճաշակն առած աղքատ աղջիկները՝ պատէ պատ են ընկնում իրանց շրջանից դուրս գալու համար։

Անանեան կամ Գայեանեան դպրոցում աւարտած և այդ իդական պրօլէտարիատին պատկանող օրիորդներից ամեն մէկը՝ ասպարէզ, գործ, աշխատանք, պարապմունք է սկսում որոնել, եթէ քիչ թէ շատ եռանդունի, սկսում է, եթէ այսպէս կարելի է ասել՝ ամեն դռներին բախել,—բայց գտնում է ամեն տեղ դռները փակ, հանդիպում է ամեն տեղ մերժման, անաջողութեան։

Դեռ ուսումնարանում եղած ժամանակ, օրիորդը անդադար լսում էր թէ հայոց լեզուն մեր հայոց հասարակութեան մէջ այժմ մի տեսակ քաղաքացիութիւն է ստացել, գործածական է դարձել, հայոց լեզու մանուկներին մատակարարելու մէջ պահանջ կայ,—և ահա ուսում աւարտած օրիորդը գնում, ներկայանում է Թիֆլիսի այս կամ այն հայոց ունեւոր ընտանիքին, առաջարկելով իրան որպէս դաստիարակուհի, բոնա.... բայց ամեն տեղ անպայման մերժումն է ստանում։ ոչ մի հայ ընտանիքում հայախօս գուվերնանտի, դաստիարակուհու, ուսուցչուհու, բոնայի պահանջ չը կայ։ Այս ինչ ընտանիքի մանուկների համար ամենևին պահանջ չը կայ դաստիարակուհու, այն ինչ ընտանիքի հայ մանուկների համար վարձված է արդէն ֆրանսիացի դաստիարակուհի, գերմանացի կամ ռուս բոնա։

Օրիորդը դիմում է մասնաւոր՝ անձանց օգնութեանը, որպէս զի իր ուսումը շարունակի, այնպիսի ուսում, որ ոչ թէ հայ իդական դպրոցների ուսման պէս գործնական ամեն տեսակ հմտութիւններից, սկզբունքներից զուրկ լինէր, բայց այնպիսի մի ուսում, որ վերջ ի վերջոյ անկախ աշխատանքի միջոց տար նրան,—բայց ամեն տեղ իր ջանքերը ապարդիւն են մնում։ Մասնաւոր անձինք մերժում են նրան ամենաչնչին օգնութիւն՝ շարունակելու իր մի անգամ սկսած ուսումը։ Աղքատ օրիորդներից մէկը կուզենար մանկաբարձուհի դառնալ, միւսները կուզենային գնալ մայրաքաղաքը, այնտեղի բարձրագոյն դպրոցներում կամ հաստատ կերպով մանկավարժութիւն, կամ բժշկականութիւն, կամ երգեցողութիւն, կամ երաժշտութիւն, կամ գրապահութիւն սովորելու, նայելով իրանց ընդունակութեանն ու հակմանը, բայց ում և դիմում են, ոչ մի տեղից օգնութիւն, քաջալերութիւն չեն ստանում։

Ընդհակառակն, այդպիսի ձգտումներ ունեցող օրիորդներին մեր բոլոր ինտելիգենտ շրջաններում կարծես մի առանձին արհամարհանքով են ընդունում։ քիչ է մնում ողորմելի օրիորդը լսէր մեր ինտելիգենցիայի բերանից հետևեալ խօսքերը. „ի՞նչ էք ուզում մեզանից, մենք մեր ազգային դպրոցներում ձեզ ուսում տուեցինք մայրենի լեզուով, թէև ոչինչ պիտանի բան էլ չը սովորեցրինք ձեզ, բայց այնու ամենայնիւ ուսում հօ տուեցինք. հիմա կարող էք մարդու գնալ, կին և մայր դառնալ...“

Կարծես թէ Գայեանեան, Անանեան, կամ Մարիամեան դպրոցը մարդու գնալու վրա դիպլոմ է տալիս։

Վերջապէս, մեր ճարահատված օրիորդը, անճոռնի դպրոցական սիստեմայով, մեր ձեռքով ստեղծած այդ իդական պրօլէտարիատի թշուառ ներկայացուցիչը, վրատահանում է դիմել հայոց բարեգործական ընկերութիւններից մինչ՝ Թիֆլիսի ընդհանուր „Հայոց կովկասեան բարեգործական“ ընկերութեանը, կամ „Հայուհեաց բարեգործական“ ընկերութեանը, կամ Բաքուի „Մարդասիրական“ ընկերութեանը, խնդրելով մի երկու տարի ժամանակով ամսական մի 15, շատ շատ մի 20 ռուբլի ստիպենդիա, որպէս զի ուսանի մի որ և է հաց տուող արհեստ, դիցուք մանկաբարձութիւն,—բայց մեր բարեգործական հաստատութիւնները այդ թոշակն էլ մերժում են աղջկան։

„Մեր նպատակը դպրոցներ պահելն է“ պատասխանում են մեր բարեգործական հաստատութիւնները...

Այդ քա՞նի դպրոցներ պահէք.... Դպրոցներ, դպրոցներ, միշտ դպրոցներ... իսկ յետոյ՝ դպրոցներից դուրս եկած անօգնական, թշուառ իդական պրօլէտարիատ, այդպէս չէ՞....

Կարծում ենք որ մեր բերած փաստերը բաւական ճարտարախօս են, կարծում ենք որ դատողութիւնները, կոմէնտարիաները աւելորդ են, կարծում ենք որ քիչ թէ շատ հասկացող ընթերցողը ինքն կը հասկանայ թէ մեզ համար հարկաւոր կը լինէր մի որոշ պրոգրամայով, ճշմարիտ իր բուն կոչմանը ծառայող բարեգործական ընկերութիւն, որ միջոց տար մեր թէ իդական և թէ մասամբ մեր արական դպրոցների ձեռքով ստեղծած անմխիթար պրօլէտարիատի համար կեանքի մէջ ճանապարհ բանալու, որպէս զի մեր դպրոցներից դուրս գալուց յետոյ, որտեղ նրանք ոչինչ գործնական բան չեն սովորում, երկու սեռի երիտասարդութիւնը, բայց մանաւանդ իդական սեռի ներկայացուցիչները՝ կարողանային որոշ թոշակ, ստիպենդիա ստանալով, շարունակել իրանց ուսումը և ձեռք բերել մի այնպիսի գործնական, կեանքի համար պիտանի հմտութիւն, կամ արհեստ, որով կարողանային ապրել։

Իսկ մենք մեր դպրոցների սիստէմայով միմիայն նպաստում ենք մեր մէջ պրօլէտարիատի կազմակերպվելուն, բայց երբ նա արդէն կայ, երբ նա մեր սեփական ձեռքով ստեղծված է արդէն, մենք մեր երեսը դարձնում ենք մեր ձեռքով ստեղծված, մեր աննպատակ դպրոցական սիստեմայի զոհերից և ամենամեծ սառնասրտութեամբ, ամենամեծ անտարբերութեամբ անօգնական ենք թողնում մեր անհեռատեսութեան և թեթևամտութեան զոհերին։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ցուսիկ վարդապետ Մովսիսեանի աշխատասիրած «Հայաստանեայց եկեղեցւոյ պատմութիւնը» բաղկացած է 381 երեսից. գրքի վերջում ըստ սովորութեան աւելացրած է «ցանկ յատուկ անուանց»։ Աշխատասիրողը իր գիրքը նշանակում է թէ ինչպէս դասագիրք և թէ ինչպէս ընթերցանելի մատեան. դա պէտք է ծառայի դպրոցներում և ուսուցիչներին և աշակերտներին։ Գուցէ դրանից են առաջ եկել մասամբ այն մի քանի թերութիւնները, որոնք աչքի են ընկնում այդ աշխատութեան մէջ։ Ցուսիկ վարդապետը եկեղեցական պատմութիւնը բաժանել է չորս շրջանի։ Առաջին շրջանը պարունակում է իր մէջ Աբգարից մինչև Տրդատ. երկրորդ շրջանը՝ պարունակում է Գրիգոր Լուսաւորչից մինչև Վարդանանց պատերազմը։ Երրորդ շրջանը 453 թուականից, Մելիտէ Մանասկերտացու կաթողիկոսական ընտրութիւնից մինչև Կիրակոս Վիրապեցու ժամանակը, երբ կաթողիկոսական աթոռը նորից փոխադրվեց Էջմիածին։ Այդ շրջանը աշխատասիրողը «հայրապետական աթոռի տառապանաց շրջան է համարում»։ Չորրորդ շրջանը սկսվում է Կիրակոս Վիրապեցու ընտրութիւնից, և հասնելով մինչև ներկայ ժամանակները, վերջանում է Գէորգ Դ. կաթողիկոսի մահով։ Մինչև այժմ լոյս տեսած «եկեղեցական պատմութիւններից», իբրև ուշադրութեան արժանի աշխատութիւն, կարելի է մատնացոյց անել Մուրադեանի «Եկեղեցական պատմութեան» վրա, որը մինչև այժմ էլ շարունակում է աղբիւր և ուղեցոյց լինել այդ տեսակ գրքի առաջին հատորները. նայում եմ խաչակապի (բանդերոլի) վրա և ապշած եմ մնում. «Արևելքի» խմբագրութիւնը գրել էր իմ հասցէս այսպէս. Dr. Grigor Arzruni (Suisse) այսինքն՝ Դր. Գրիգոր Արծրունի (Շվէյցարիա), իսկ Ցիւրիխ քաղաքի անունը խմբագրութիւնը մոռացել էր գրել։ Եւ դրան չը նայած լրագրի համարները ուղիղ Ցիւրիխ էին ուղարկել և չատ չուտ։ Ուրեմն երևում է, որ Շվէյցարիայի սահմանին արդէն ուղղակի Ցիւրիխ էին ուղարկել համարները և ոչ ուրիշ մի որ և է քաղաք։ Ո՞րտեղից շվէյցարական սահմանագլխի փոստը կարող էր իմանալ թէ այս ինչ մարդ, այս ինչ անոյշ օտարական Ցիւրիխումն է կենում և ոչ շվէյցարական հազար ու մի ուրիշ քաղաքներից մինում,—այդ բանը մինչև այժմ ինձ համար գուշտնիք, անբացատրելի հանելուկ է մնացել և ցոյց է տալիս միայն որքան բաղադրեալ է, դեղցիկ կերպով կազմակերպված է, կատարեալ է և ամեն բանին տեղեակ է շվէյցարական փոստային վարչութիւնը։

Ցիւրիխի, որպէս առևտրական և գործարանական, մի և նոյն ժամանակ համալսարանական բազմամարդ քաղաքի փոստատունը այնքան յաճախված է, այնքան մեծ է այդ փոստատան մէջ օրական ստացվող նամակների թիւը, որ այդտեղ մոցրած է այժմ հասարակութեանը նամակներ բաժանելու մի բոլորովին նոր ձև։ Փոստատան շինութեան մէջ կայ մի բաժանմունք, որ անուանվում է «Post-Fach». Ահա ինչ բան է դա. անդալին դահլիճի մի ամբողջ պատի մէջ, մի քանի սաժէն երկարութեան և մի քանի արշին բարձրութեան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ՏԱՐԻ ՇՎԷՑՑԱՐԻԱՑՈՒՄ

ՑԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Հետևելով բժշկի խորհրդին և խուսափելով երեկոյեան խոնաւ և ցուրտ եղանակից, ես իմ օրս հետևեալ կերպով էի բաժանում. վաղ առաւօտ վեր կենալով, ես խմում էի մի թաս կաթ և անմիջապէս տանից դուրս էի գալիս։ Նախ և առաջ ես գնում էի փոստատուն, տեսնելու արդեօք ստացվել են իմ անունով որ և է նամակներ, այնուհետև ես զբօսնում էի քաղաքի մէջ մինչև ճաշ, այսինքն մինչև ժամի 1-ը, այդ զբօսանքից օգուտ քաղելով այն ամենը տեսնելու քաղաքի մէջ, որ տեսնելու և ուսումնասիրելու արժանի էր։ Ժամի 1-ին ես վերադառնում էի բնակարանս, ճաշում էի, իսկ ճաշից յետոյ անմիջապէս մի որ և է զբօսանք էի անում քաղաքից դուրս՝ կամ ոտով, կամ կառքով, կամ երկաթուղով, կամ վերջապէս շոգենաւով։ Բայց ժամը 7-ին, կամ շատ շատ 8-ին, այսինքն ընթրիքի ժամանակ, ես արդէն տանն էի և այլ ևս չէի դուրս գալիս տանից, իսկ միայն շաբաթը երկու անգամ, ժամը 5-ից մինչև 6-ը կընում էի բազմարուեստեան դպրոցը, որ համալսարանի հետ մի և նոյն շինութեան մէջ է գտնվում և որ իմ բնակարանից շատ մօտ էր, յայտնի Ցոհան Շերը պրոֆէսորի պատմական դասախօսութիւնները լսելու։

Ամեն առաւօտ փոստը գնալով, ես չէի կարող չը զմայլվել փոստատան հրաշալի և ահագին շինութեամբ և նրա մէջ տիրող գեղեցիկ կարգ ու սարքով, փոստային հիմնարկութեան օրինակելի կազմակերպութեամբ։

Այդ ահագին և հրաշալի շինութիւնը երկյարկանի է, և շատ ընդարձակ է։ Նա գտնվում է Bahnhofstrasse ասված փողոցի վրա։ Ներքևի յարկում գտնվում է փոստը, իսկ վերևի յարկում հեռագրատունը։ Ծառայողների գոնէ կէսը կանայք են։ Ամեն գործակատարութիւն լինում է արագ, հանգիստ, առանց որ և է դժուարութիւնների, անվրդով, առանց որ և է զանդաղութեան։ Դուք դիմում էք այս կամ այն ծառայողին, մի և նոյն է աղջիկ լինի դա թէ տղամարդ, մի տեղեկութեան համար,—ձեզ պատասխանում են կարճ, լակոնական, սառն, բայց քաղաքավարի կերպով։ Դուք բաւականացրած էք, դուք ստացել էք ձեզ անհրաժեշտ բացատրութիւնը, բայց ձեզ տուած պատասխանից դուք այնու ամենայնիւ զգում էք, որ շատ երկար խօսել ձեզ հետ ոչ ոք տրամադիր չէ, որովհետև զբաղմունքի մէջ աւելորդ ժամանակ ոչ ոք չունի կորցնելու։ Եւ նոյն գործը, որ մնացեալ փոստատան այս կամ այն բաժանմունքի մէջ չորս, հինգ մարդ են կատարում, շվէյցարական փոստատան նոյնանման բաժանմունքի մէջ նոյնչափ գործ մի երկու մարդ են կատարում։ Դրա պատճառն այն է, որ ամեն տեսակ գործակատարութիւն Շվէյցարիայի այնպիսի հիմնարկութիւնների մէջ, ինչպէս փոստատունն է, կամ հեռագրատունը՝ վերին աստիճանի հեշտացրած է։ Մեզանում փոստատան մէջ փող կամ որ և է ծրար, որ և է արկղիկ ստանալու համար, ամեն անգամ պէտք է որ ձեր ստացած յայտարարութիւնը վաւերացրած լինի պօլիցիայով։ Շվէյցարիայի փոստատունը մի անգամ միայն կը հարցնեն ձեր անցագրի համարը, կը նշանակեն ձեր ազգանունը և ձեր անցագրի համարը, և այնուհետև տարիների ընթացքում ձեզ առանց դժուարութեան ամեն բան կը տան, ինչ որ կը ստացվի ձեր անունով։ Փողի ծրար կամ որ և է ուրիշ բան ստանալով դուք, ինչպէս մեզանում, չը պէտք է երկար ու բարակ ձևականութիւնների ենթարկվէք, անվերջանալի ստորագրութիւններ անէք, պօլիցիայի կողմից վաւերացնել տաք ձեր ստացած յայտարարութիւնը և այլն,—ոչ. ծրարը ստանալու համար պէտք է միայն ձեռք քաշէք մատեանի մէջ ձեր անունն ու ազգանունը և դրանով վերջանում է ամեն բան, բոլորովին այնպէս, ինչպէս մեզանում պատուիրած նամակներ էք ստանում։ Եւ եթէ ուզենաք, փողի ծրարն էլ ձեզ կը բերեն ձեր բնակարանը։

Ցոյց տալու համար որքան հրաշալի է Շվէյցարական փոստային կազմակերպութիւնը, ես մի զարմանալի անցք կը պատմեմ, որ ինձ հետ է պատահել։ Ցիւրիխ հասնելուն պէս ես անմիջապէս գրեցի Կ. Պոլիս «Արևելքի» խմբագրութեանը, որ իմ անունով ուղարկեն Ցիւրիխ այդ լրագիրը և իմ հասցէս, ի հարկէ, մանրամասնաբար հաղորդեցի «Արևելքի» խմբագրութեանը։ Զանցաւ մի երկու շաբաթ և ահա ես ստանում եմ յիշեալ լրագրի առաջին համարները. նայում եմ խաչակապի (բանդերոլի) վրա և ապշած եմ մնում. «Արևելքի» խմբագրութիւնը գրել էր իմ հասցէս այսպէս. Dr. Grigor Arzruni (Suisse) այսինքն՝ Դր. Գրիգոր Արծրունի (Շվէյցարիա), իսկ Ցիւրիխ քաղաքի անունը խմբագրութիւնը մոռացել էր գրել։ Եւ դրան չը նայած լրագրի համարները ուղիղ Ցիւրիխ էին ուղարկել և չատ չուտ։ Ուրեմն երևում է, որ Շվէյցարիայի սահմանին արդէն ուղղակի Ցիւրիխ էին ուղարկել համարները և ոչ ուրիշ մի որ և է քաղաք։ Ո՞րտեղից շվէյցարական սահմանագլխի փոստը կարող էր իմանալ թէ այս ինչ մարդ, այս ինչ անոյշ օտարական Ցիւրիխումն է կենում և ոչ շվէյցարական հազար ու մի ուրիշ քաղաքներից մինում,—այդ բանը մինչև այժմ ինձ համար գուշտնիք, անբացատրելի հանելուկ է մնացել և ցոյց է տալիս միայն որքան բաղադրեալ է, դեղցիկ կերպով կազմակերպված է, կատարեալ է և ամեն բանին տեղեակ է շվէյցարական փոստային վարչութիւնը։

Ցիւրիխի, որպէս առևտրական և գործարանական, մի և նոյն ժամանակ համալսարանական բազմամարդ քաղաքի փոստատունը այնքան յաճախված է, այնքան մեծ է այդ փոստատան մէջ օրական ստացվող նամակների թիւը, որ այդտեղ մոցրած է այժմ հասարակութեանը նամակներ բաժանելու մի բոլորովին նոր ձև։ Փոստատան շինութեան մէջ կայ մի բաժանմունք, որ անուանվում է «Post-Fach». Ահա ինչ բան է դա. անդալին դահլիճի մի ամբողջ պատի մէջ, մի քանի սաժէն երկարութեան և մի քանի արշին բարձրութեան

-ոՒՄԻՆ ՇՈՒՐՋ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԱՅՍՈՒՀԵՏ ԵՎ ԱՅԺ

պէս ոչ ոքի համար պատաբեր չէ լոկ սնունով միայն պաշտօն սահմանել։

Զը մոռանաք յիշել որ մեր եկեղեցին նոյնպէս վերանորոգութիւն է պահանջում. տանիքը խախտված է, լուսամուտները չափազանց փոքր են, ներսի կողմը անշուք է, մռայլ պատերը ձիթանկար այլանդակ պատկերներով շատ տխուր տպաւորութիւն են թողնում, մանաւանդ օտարական այցելուի վրայ։ Այս մասին շատ է խօսվում. տեսնենք խօսքը երբ պէտք է գործ դառնայ։ Երբ պէտք է լինի որ փոքր ինչ լրջօրէն վերաբերվէինք մեր թերութիւններին և եռանդուն պտով աշխատէինք մեր պարտքը կատարել։

Ղարաքլիսեցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեր թղթակիցը գրում է մեզ հետևեալը։ «Շամախուց Բաքու եկող ականատեսներ պատմում են, որ Մարազա մալականների գիւղում օրերումս մի առանդութիւն է լինում։ Մի շուայլ մալական երիտասարդ փախցնում է ընկերի հետ մի հարսնացու աղջիկ։ Այդ երիտասարդին երեք օր որոնելուց յետոյ, աղջկայ ծնողները վերջապէս գտնում են և բռնում, բայց այնքան են ծեծում ու ջարդում նրան, որ երիտասարդը մի քանի օրից յետոյ մեռնում է։»

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են։ «Մեր քաղաքի երկաթի գործարաններում գործերը սարսափելի կերպով քշացել են. պ. Միրզոյեանի գործարանը վաղուց է արդէն որ փակ է, նոյնպէս պ. Մարտիրոսեանի փոքրիկ գործարանը փակ է։ Լէնցի նոր գործարանը թէև բաց է, բայց գործ չը կայ։ Փողի կողմից նա էլ շատ է նեղացնում և քիչ չեն դատարանի դիմողները։ Գուստավ Լիստի գործարանը նոյնպէս քիչ գործ ունի։ Պ. Շահգեդանեանի գործարանն է միայն որտեղ աւելի շատ գործ կայ, որովհետև ամենալաւ արդիւնքները այդտեղից են դուրս գալիս, այդտեղ են շինվում նոր նաֆթաւաղանները, սպասվում են Անդրկասեան երկաթուղու վարչութիւնից նոր պատուէրներ։ Իսկ փոքրիկ ընկերութիւններ ամենևին գործ չունեն։ Եւ այդ բոլոր անաջողութիւնները կապ ունեն նաֆթի անաջողութեան հետ։ Առհասարակ Բաքու քաղաքը այլ ևս առաջվայ Բաքուն չէ։»

—

Մեզ գրում են ԴԷՐԲԷՆԴԻՑ հետևեալը։ «Քաղաքիս թէ փողոցների և թէ քաղաքային այգու լապտերները շատ անկանոն են վառվում, այնպէս որ գիշեր ժամանակ, մանաւանդ երբ ցեխ է լինում, հաճարեա անհնարին է լինում անցնել։ Հոկտեմբերի 16-ին տեղիս օդի քաշելու գործարանում մի դժբաղդ դէպք է պատահել. գործարանի մի թուրք ծառայ մոտենում է գիշերվայ ժամի 11½-ին գործարանի ջրի աւազանին, խմելու համար ջուր վերցնելու նպատակով, բայց յանկարծ նրա ոտքը սահվում է և խեղճը ընկնում է աւազանի մէջ, որտեղ և խեղդվում է մինչև օգնութեան հասնելը, քանի որ աւազանը 2 սաժէնից աւելի խորութիւն է ունենում։ Երբ խեղդվածի մարմինը հանեցին ջրից ու բժիշկը կտրում է դիակը ու հետազօտում, նա գտնում է որ մեռածի փայծաղը շատ մեծացրած է լինում և 15 ֆունտ ծանրութիւն է ունենում, այնպէս որ բժշկի կարծիքով եթէ մարդը ջրի մէջ էլ չընկնէր, նա այնու ամենայնիւ իր հրէշաւոր փայծաղի պատճառով մի երեք, չորս ամսից աւելի չէր կարող ապրել։ Դարձեալ մի նորութիւն, բայց այս անգամ մի մխիթարական նորութիւն. տեղիս քաղաքային բժիշկ պ. Թարխանեանց, ինչպէս լսում ենք, մտադիր է բաց անել մի բժշկանոց Դէրբէնդում։»

—

ԻԳԴԻՐԻՑ մեզ գրում են հետևեալը։ «Լսում ենք որ Իգդիրի հայ հասարակութեան մեծամասնութիւնը խնդիրք է ներկայացրել Երևանի կոնսիստորիային, մեր գիւղի համար քահանայ ձեռնադրելու պ. Մկրտիչ Զաքարեանին, որ Գէորգեան ճեմարանում ուսանելուց յետոյ, երկար ժամանակ այլ և այլ ազգային դպրոցներում ամենայն բարեխղճութեամբ ուսուցչական պաշտօններ է վարել։» Մեր կարծիքով այդ ընտրութիւնը խիստ աջող է և եթէ հոգևոր իշխանութիւնը կը համաձայնվի իգդիրցիների խնդրանքի հետ, մենք վերջապէս կունենանք մի ուսեալ քահանայ, որ, յոյսով ենք, կաշխատի լինել մեզ համար Քրիստոսի վարդապետութեան հաստատուն թարգման և ուսուցիչ տհաս սմբոների համար։»

—

Պետերբուրգի ուսանող լրագրները հետևեալ տեղեկութիւններն են հաղորդում կանանց կուրսերում սովորողների մասին։ Անցեալ ուսումնական տարվայ ընթացքում կուրսերի մէջ կային 743 հոգի։ Կանանց կուրսերի հինգ տարվայ գոյութեան ընթացքում աւարտել են այնտեղից 607 հոգի, որոնցից 110-ը ամուսնացել են, իսկ մնացորդաց այդքան հոգի էլ իրանց նուիրել են մանկավարժական գործունէութեան։

—

Պետական խորհրդին ներկայացրած է գալ տարվայ համար ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան ծախքերի նախագիծը, որի մասին Պետերբուրգի լրագիրները հաղորդում են հետևեալը։ Համալսարանների պահպանութեան համար ծախք նշանակված է՝ 3,086,240 ռուբլի. Դեմիդովի իրաւաբանական լիցէոնի համար՝ 49,654 ռուբլի, գիմնազիաների, պրոգիմնազիաների և ուրիշ միջնակարգ դպրոցների համար՝ 6,217,345 ռուբլի. բէալական ուսումնարանների համար՝ 2,053,627 ռուբլի. դաւառական և քաղաքային դպրոցների համար՝ 1,588,025 ռուբլի, ծխական և սկզբնական դպրոցների համար՝ 375,256 ռ., ժողովրդական դպրոցների համար՝ 1,735,360 ռուբլի. ուսուցչական ինստիտուտների և սեմինարիաների համար՝ 1,252,390 ռուբլի։ Նոյնպէս և յատկացրած են իգական գիմնազիաներին նպաստ՝ 871,335 ռուբլի։ Բացի դրանից մի դումար էլ յատկացրած է ստիպենդիաների և նպաստների համար։ Երկրի կրթութեան գործին յատկացրած է ընդամենը 20,778,396 ռուբլի։

—

Լսում ենք որ բժշկապետ Գրիգոր Տէր-Գրիգորեանց, որ առաջ Վաղարշապատի բժիշկ էր և այժմ Պետերբուրգում դոկտորի քննութիւն տալով, վերադարձել է Թիֆլիս, դիտաւորութիւն ունի դիմել կառավարութեանը թոյլտուութիւն խնդրելու իր տան մէջ (կաթոլիկաց եկեղեցու հանդէպ) առողջապահութեան մասնաւոր դասեր կարդալու։ Բժշկապետը թոյլտուութիւն ստանալուց յետոյ կը սկսի իր այդ դասախօսութիւնները միայն այն դէպքում, եթէ 10-ից մինչև 20 հոգի լսող կը հաւաքվի։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են։ «Եղանակը Երևանում զարմանալի փոփոխութեան է ենթարկվել. հին ժամանակները դեկտեմբերին հազիւ էինք ձիւնի երեսը տեսնում, իսկ այս տարի սեպտեմբերի վերջերում ձիւն եկաւ և մեծ վնասներ պատճառեց Երևանի և նրա շրջակայ այգիներին նոյնպէս և բամբակի պլանտացիաներին։ Ցրտերի պատճառով այս տարվայ խաղողը սովորականից շուտ քաղեցին, և փոքր այգետէրերը ստիպվեցան իրանց խաղողը չնչին գներով ծախել մի քանի յայտնի գինեգործներին։»

—

ԵՐԵՒԱՆԻՑ Հին-Նախիջևան տանող ճանապարհը վերանորոգվելով՝ ճանապարհի երկու կողմի առուների մէջ, ինչպէս մեզ գրում են, բազմաթիւ սատկած օձեր են գտնվել, որոնք թափված էին մեծ տարածութեան վրա։ Այդ երևոյթը ժողովրդի երևակայութեան մէջ ծնեցրել է այլ և այլ լեգենդներ. ոմանք ասում են որ օձերը հողը փորելու ժամանակ գետնից են դուրս եկել, իսկ ոմանք պնդում են թէ Մասիսի օձերը յաղթվելով Իլան-Դաղի կոչված լեռան օձերից, որանք բոլորը միացած արշաւանք էին անում դէպի Արագած սարը, բայց անակնկալ ցուրտը սառցրեց դրանց ճանապարհին։

—

Ներկայ թուականի յունվարի մէկից մինչև սեպտեմբերի մէկը Ռուսաստանից արտահանված է 254,685,000 ռուբլու ապրանք. իսկ ներմուծված է 249,270,000 ռուբլու ապրանք։ Համեմատելով անցեալ տարվայ նոյն ժամանակամիջոցի հետ, երևում է, որ այս տարի արտահանված ապրանքը պակաս է անցեալ տարվանից 64,217,000 ռուբլով. իսկ ներմուծված ապրանքը այս տարի աւելացել է 2,201,000 ռուբլիով։

—

«Tehwija» լրագրի տուած տեղեկութիւններից երևում է, որ Բալտեան նահանգի գերմանական դաստակական դպրոցների ռուսաց քաղաքային դպրոցներ դարձնելը կը վերջանայ մինչև առաջիկայ ուսումնական տարին։ Բալտեան շատ քաղաքները պատրաստվում են գործադրելու այդ առիթով գիտելի Դորպատի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հրատարակած կարգադրութիւնները։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են։ «Մեզ մօտ այժմ հայերէն ներկայացումներ չը կան, բայց մի խմբի ներկայացումներից, որոնց մասին չարժէ խօսել։ Պ. Կարա-Մուրզայի երգեցիկ խումբը դեռ ևս պատրաստվում է։ Ջրօրհնէքին նա իր խմբով Թիֆլիս է գալու։ Մթթէ Թիֆլիսեցիք դէպի պ. Կարա-Մուրզայի խումբի կենցէրանները էլ նոյնքան անտարբեր կը լինեն, որքան դէպի հայոց թատրոն։ Մեր կարծիքով Թիֆլիսի հայոց թատրոնական կոմիտէտը ուշի լաւ կանէր եթէ հայերէն ներկայացումները ոչ թէ Թիֆլիսում, այլ Բաքուի մէջ տար։ Հաւատացած կարելի է լինել որ մեզ մօտ հայոց թատրոնական ներկայացումները Թիֆլիսից ոտս անդամ աւելի լաւ կաջողվէին։»

—

Կարգադրված է, որ գանձարանների և այլ դրամական հիմնարկութիւնների դրամարկղների պահպանութիւնը այլ ևս չը յանձնվի պինուորական պահապանների։ Այդ կարգադրութեան պատճառով, պետական բանկի Թիֆլիսի բաժինը վճռել է իր դրամարկղի համար էլէկտրական պահպանութիւն չունել։ Դրամարկղի պահեստը հեռախօսներով և էլէքտրական զանգակներով կը միացվի Թիֆլիսի ոստիկանապետի և հրաշէջների խմբի դիւանատան հետ։ Գալիանական տարրերի ազդեցութեամբ զանգակների չարժողութիւնները տեղի կունենան առանց որ և է մարդու կամ պահապանի միջնորդութեան։ Զանգակները կը հնչեն և այն ժամանակ, երբ որ և իցէ մէկը դիտմամբ կամենայ վնասել լարերը։ Այդ բոլորի չնչութիւնը, ինչպէս հաղորդում է «Кавказъ» լրագիրը, արդէն յանձնված է մի հմուտ մասնագէտի։

—

Վրաց «Մծղեմսի» շաբաթաթերթը հաղորդում է որ դեկտեմբերին տեղի կունենայ Իմէրեթի թեմի հոգևորականութեան ժողովը, քննելու համար Քութայիսի հոգևոր դպրոցին վերաբերեալ մի քանի հարցեր։

—

Հոկտեմբերի 2-ին, Թիֆլիսի ժողովարանի դահլիճում օրիորդ Ասլամազեանի կոնցէրտը կարելի է աջող համարել։ Դահլիճը գրեթէ լի էր։ Օրիորդի ձայնը քանի գնում է աւելի դուրեկան, աւելի մետալական timbre է ընդունում։ Առանձին զգացմունքով և աջող կերպով երգեց նա այս անգամ Դիւտշի romance-ը։ Պ. Տէր-Դաւթեան կոնցերտի առաջին բաժանմունքի մէջ ածեց Շոպէնի մի վալս և Լիստի «Regata Venitienne», բայց կարծես թէ փոքր ինչ շփոթվեցաւ իր այդ առաջին դէբիւտում և այնքան վստահութեամբ չածեց այդ պիէսաները, այն ինչ երկրորդ բաժանմունքի մէջ պ. Տէր-Դաւթեանի ածած Լիստի 6-րդ բապսոդիան կատարեալ աջողութիւն ունեցաւ։ Երևում էր որ երիտասարդ պիանիստը, որ առաջին բաժանմունքի մէջ փոքր ինչ շփոթվեցաւ, երկրորդ բաժանմունքի մէջ արդէն կատարելապէս տիրապետում էր իրան։ Զութակ ածող պ. Դումային կարելի է ուրախութեամբ լսել։ Պ. Օպօչինին տկարութեան պատճառով բացակայ էր։ Եւ դժբաղդաբար էլ է ամբողջ օրերը դատաստանական պաշտում, որպէս տիկին Տէր-Մկրտչեանի փաստաբան, Անտոն Ղորղանեանի բաղադրեալ գործին ուշադրութեամբ հետևելուց յետոյ, դալ կոնցէրտ և հասարակութեանը զուարճացնել ոտանաւորներ կարդալով։

—

Կիրակի, նոյեմբերի 2-ին, փակվեցաւ պ. Գ. Բաշինջաղեանի պատկերահանդէսը։ Պատկերահանդէսը յաճախել են 1070 հոգի, որոնցից 770-ը վճարով։ Դրանցից 220 աշակերտներ և աշակերտուհիներ են։ Մնացած 300 հոգի ձրի են մտել։ Այդ վերջինների մեծամասնութիւնը նոյնպէս եղել է աշակերտներից, և ի միջի այլոց երեք հայ ուսուցիչ և երեք հայ քահանայ։

—

Այսօր, երկուշաբթի, հինգերորդ օրն է որ շարունակում է քննվել դատաստանական պալատում Ղորղանեանցի և միւսների գործը։ Մինչև այժմ կարդացվում էին նահանգական դատարանի արձանագրութիւնները, իսկ այսօր կարդացվում են էկսպերտների ցուցմունքները։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲՕԼԳԱՐԱԿԱՆ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՃԱՌԸ

Հոկտեմբեր ամսի 20-ին, Տիրնօվոյում, առաւօտեան 11 ժամին, ինչպէս հեռագիրը մեզ արդէն լուր բերից, բօլգարական աղգային մեծ ժողովը բացվեցաւ խնամակալութեան ճառով, որը կարդաց Ստեփան Ստամբուլօվ։ Ճառի բովանդակութիւնը հետևեալն է։ «Պ.պ. պատգամաւորներ. բօլգարական առաջին իշխանի՝ Ալէքսանդր Բաթենբերգի գահից հրաժարվելուց յետոյ, կառավարութիւնը իր վրա վերցրեց երկրի կառավարութիւնը, և գործ դրեց իրանից կախված բոլոր միջոցները, պահպանելու համար Բօլգարիայի քաղաքացիների հանգստութիւնը, խաղաղութիւնը, ապահովութիւնը, կայքը և պատիւը, նոյնպէս և հանելու համար հայրենիքը այն անելանելի դրութիւնից, որի մէջ նա նետվեցաւ օգոստոսի 9-ի յեղափոխութեամբը։ Պարոնայք պատգամաւորներ. կառավարութեան ամենամեծ հոգայողութիւնը կայանում էր Բօլգարիայի քաղաքացիներին դուսարելու մէջ, առաջարկելով նոցա ընտրել պատգամաւորներ և դնել նոցա վրա մի դժուար, բայց հաճելի պարտաւորութիւն, այն է բօլգարական թափուր գահի համար իշխան ընտրել. ձեզ յայտնի է, որ չը նայած մեր ներկայ անցողական դրութեան յատուկ դժուարութիւններին, ընտրութիւնները կատարվեցան յաջող կերպով, և այսօր կառավարութիւնը գոհութեամբ տեսնում է Բօլգարիայի տէր մայրաքաղաքում բօլգարական աղգի ներկայացուցիչներին, որոնք համախմբված են Բօլգարիայի իշխան ընտրելու համար։ Միանգամայն համոզված լինելով, որ դուք, պարոնայք պատգամաւորներ, կարող կը լինէք իշխան ընտրել մի այնպիսի անձն, որ իրան կը նուիրի մեր հայրենիքի շահերի և ազատութեան պաշտպանութեանը, որը կառաջնորդի աղգը յառաջադիմութեան, փառքի, մեծութեան և իր պատմական նշանակութեան հասցնող ճանապարհով,—մենք յայտնում ենք, որ ազգային ժողովը բացված է, Ամենարարձրեալի օրհնութիւնը խնդրելով ձեր բոլոր ձեռնարկութիւնների համար։ Կեցցէ անկախ և ազատ Բօլգարիան»։ Ճառի ներքևը ստորագրել էին՝ Ս. Ստամբուլօվ, Պ. Կարավելօվ, Մուտկուրօվ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«République Française» վիճակագրից իր ստացած իբրև թէ հաստատ տեղեկութիւնների հիման վրա, ասում է որ իշխան Վալդեմար կը հրաժարվի բօլգարական գահը ընդունելուց, և որ այդ վճիռը կայացրած է դեռ այն ժամանակ, երբ յունաց Գէորգ թագաւորը իր հօր մօտ Կոպենհագենում էր։

—Հոկտեմբերի 20-ին, Լօնդոնում տեղի ունեցաւ պարլամենտական նստաշրջանի գոցելուց յետոյ՝ առաջին մինիստրական խորհուրդը։ Մինիստրները զբաղվեցան եգիպտական, բօլգարական և իրլանդական հարցերով։ Եգիպտոսի վերաբերութեամբ մինիստրութիւնը Պետերբուրգից հանգստացնող տեղեկութիւն է ստացել։ Վճռվեցաւ շարունակել չեզոք դիրք բռնել բօլգարական գործերի վերաբերութեամբ։ Իրլանդական խնդրի մասին Գիկս-Բիչ հանգստացնող տեղեկութիւններ տուաւ։

—Շուտով կը սկսվի անգլիական պարլամենտի նստաշրջանը։ Կը սկսվեն շուտով քաղաքական մրցումները։ Մինիստրութեան դրութիւնը շատ անսպասա է. ներքին և արտաքին կնճռոտ հարցերը շատ մութ ապագայ են խոստանում։ Զարմանալի չէ, որ Լօնդոնի արմատական լրագիրները հետևեալն են գրում այդ առիթով։ «Դա մի ջրհեղեղ է, որի մօտ կանգնած է Սալիսբրի իր ընկերներով. սակայն ազատարար նաւը չը կայ, չէ երևում ոչ մի Արարատ, և փոխանակ աւետաբեր աղաւնու, նրանց մօտ կանգնած է միայն լօրդ Զերչիլ...։»

—Լօնդոնում կայացած մինիստրական խորհրդում վճռվեցաւ, որ եթէ բօլգարական աղգային ժողովի արած իշխանի ընտրութիւնը վերջնական հետևանքի չի հասցնի և բոլոր սկսութիւնները չեն համաձայնի այդ բանի մէջ, այն ժամանակ Անգլիան կառաջարկէ դեսպանաժողով գումարել վերաքննելու համար Բալկանի ամբողջ հարցը։

—Հոկտեմբերի 20-ին Մանչեստրի առևտրական ժողովի նիստում քննութեան ենթարկվեցաւ ազատ վաճառականութեան հարցը։ Ներկայ առևտրական ճգնաժամը կարծէք մի տեսակ կոտրել է Անգլիայի

վաճառականական աշխարհի հաւատը դէպի առևտուրի աղատ սկզբունքը և այնտեղ էլ այժմ շատերը ծանր մաքսերը՝ նշանակելու մտքի կողմնակիցներ են դարձել: Մինչդեռ եւրոպական շատ երկիրներ դիմել են ծանր մաքսերի օգնութեան իրանց ներքին արդիւնաբերութիւնը ծաղկեցնելու համար, Անգլիան դեռ կանգնած է դրա հակառակ ուղղութեան վրա: Ժողովին ներկայացվեցաւ մի զեկուցում, որի մէջ առաջարկվում էր մաքսային քաղաքականութեան հետևել: Փոքր էր մնացել որ այդ զեկուցումը ընդունվի. բայց բարեբաղդաբար 22 ձայնով, ընդդէմ 21-ի մերժվեցաւ: Եւ եթէ այդ զեկուցումը ընդունվէր, այդ զարմանալի կը լինէր գլխաւորապէս այն պատճառով, որ Մանչեստրը եղել է կօբդէնի և Բրայտի չկողմների և իդէաների օրօրոցը:

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Եապօնիան չարունակում է անդադար և եռանդով հետևել Եւրոպային, և փոխ առնել, իրացնել եւրոպական լուսաւորութեան արդիւնքները: Ժողովրդական կրթութեան գործի վրա այդ կողմից առանձին հետաքրքրութիւն է դարձրած: Բազմաթիւ են մանկական պարտէզները, կոյրերի, խուլերի, համրների դպրոցները, կանանց ուսումնարանները, տարրական դպրոցները, բժշկական, ճարտարապետական, իրաւաբանական, երկրագործական, լեզուաբանական բարձր դպրոցները:

* *
*

Բերլինի «Echo» շաբաթաթերթի մէջ կարդում ենք, որ Բէրլին քաղաքը շնորհից վերցվող հարկից ստանում է մի բաւական մեծ գումար, այն է տարեկան 290,000 մարկ եկամուտ: Այդ եկամուտից տարեկան ծախսվում է 4000 մարկ շնորհից հարկ հաւաքող վարչութիւնը պահպանելու համար, ուրեմն հանելով ամբողջ գումարից այդ 4000 մարկ, յայտնվում է որ շնորհի հարկը տալիս է գերմանական մայրաքաղաքին մի պատկառելի գումար, այն է 286,000 մարկ զուտ արդիւնք:

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 հոկտեմբերի: Երդուեալ հաւատարմատար Ֆրանկելին թոյլ է տրված հրատարակել Թիֆլիսում 1887 թվից «Кавказское Обозрѣніе»:

ՏԻՐՆՈՎՈ, 31 հոկտեմբերի: Բոլգարական ազգային մեծ ժողովի բիւրօն ուղարկեց այսօր Դանիայի թագաւոր Քրիստիանին մի հեռագիր, որի մէջ յոյս է յայտնում, որ Նորին Մեծութիւնը թոյլ կը տայ իր որդուն ընդունելու բոլգարական գահը:

ԿՕՊԵՆՀԱԳԵՆ, 1 նոյեմբերի: Դանիայի թագաւորը անհամաձայնութիւն յայտնեց իշխան Վոլդեմարի Բոլգարիայի իշխանական գահը ընդունելու վերաբերութեամբ:

ՎԻԵՆՆԱ, 1 նոյեմբերի: Եթէ պետութիւնները չեն առաջարկի բոլգարական գահի համար իրանց թեկնածուն, այն ժամանակ ազգային մեծ ժողովը, ինչպէս երևում է, կը վերականգնի խնամակալութեան լիազօրութիւնը, հեռացնելով կարավելովին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 նոյեմբերի: Բարձրագոյն հրաման.—հետևակի և հեծելազօրքի առանձին մասերում մտցնել որսորդական զօրաբաժիններ: Վայրի գաղանների որսորդութիւնը հետևակ զօրքի մէջ, և ներով որսորդութիւնը հեծելազօրքի մէջ, պէտք է, որքան կարելի է կապված լինեն տեղի ուսումնասիրութեան հետ: Այդպիսով, յանկութիւն կայ սովորեցնել մարդկանց դժուար և վտանգաւոր անձնական յանձնարարութիւններ կատարել պատերազմի ժամանակ:

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Հոկտեմբերի 31-ին

Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ		$22^{15}/_{16}$	պէնս.	
— — Համբուրգի վրա	—	195	պֆ.	
— — Փարիզի վրա	—	241	սան.	
Ոսկի — արժէ	— —	8	ր.	64 կ.
Մաքսային կուպոններ	— . .	166	»	$^3/_4$ »
Արծաթ — —	— . . .	1	»	34 »
Բօրսային դիսկոնտներ	— . .	$4^3/_4$	և	$6^0/_0$ »
Պետակ. բանկ. $5^0/_0$ տոմս 1-ին չրջանի		100	»	50 »
— — — — 2-րդ	—	99	»	75 »
— — — — 3-րդ	—	99	»	50 »
— — — — 4-րդ	—	99	»	62 »
— — — — 5-րդ	—	99	»	87 »
Արևելեան $5^0/_0$ փոխառութ. 1-ին չրջ.		99	»	12 »
— — 2-րդ	—	99	»	12 »
— — 3-րդ	—	99	»	12 »
Ներքին $5^0/_0$ առաջին փոխառութ.		240	»	25 »
— երկրորդ	—	222	»	25 »
$5^1/_2{}^0/_0$ րէնտա		104	»	50 »
Ոսկեայ րէնտա.		186	»	75 »
Նոր կոնսոլիդած փոխառութիւն. .		157	»	75 »
$5^0/_0$ գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ.		161	»	37 »
$5^1/_2{}^0/_0$ գրաւական թղթեր խերսօնի կալուած. բանկի.		101	»	25 »
$6^0/_0$ գրաւակ. թղ. խարկովի կալ. բան.		100	»	50 »
— — Պոլտավայի —	—	100	»	37 »
— — Պետ.Տօլսկ. —	—	100	»	50 »
— — Կիեվի	— —	102	»	— »
— — Մոսկվայի	— —	102	»	— »
— — Բեսարաբ. Տավր. —		100	»	87 »
— — Նիժ. Սամար.	—	100	»	87 »
— — Վիլնայի	—	100	»	50 »
— — Թիֆլիսի —	27 և 43 տ.	97	»	— »
— — Բութայիսի-	18 և 43 տ.	97	»	— »
Վոլժսկо-Կամսկի բանկի ակցիաները		571	»	— »
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.		263	»	50 »
Րիբինսկ-Վոլոգդի ընկ.		97	»	25 »
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ.		93	»	87 »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ .		94	»	37 »
Օդէսայի — — .		93	»	— »
Նոր երկաթուղային րէնտա . . .		—	»	— »
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ. .		—	»	— »
Պետական բանկի 6-դ հրատարակութեան տոմսերը		—	»	— »
Գրաւ. թղ. Ազնւ. կալ. բանկի . .		98	»	75 »

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը ամրանում է:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ, ՈՐ ԱՒԱՐՏԵԼ Է Գ. ՃԵՄԱՐԱՆԸ, *ցանկանում է ուսուցչի պաշտօն ունենալ* ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ: *Կը դասախօսի Հայոց լեզուից, Հայոց պատմութիւնից և Հայաստանի աշխարհագրութիւնից: Հասցէն իմանալ „Մշակի“ խմբագրատանը:*
1—2

ԷՄԻՆ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ

ԶՐԿԱՆՔԻ ԶՈՀ

Վաճառում են 80 *կոպէկով Թիֆլիսի դրավաճառանոցները և Երևանում Նեղինակը:* 4—10

ԶՕԿՕԼԱԳ

Ս. ՍԻՈՒ *և* ԸՆԿ.

(Ц. 4857.) 37—50 (*և*)

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

Միքայէլ պ. Սափարեանցի հրատարակութեամբ Գ. ՏԷՐ ՂՈՒԿԱՍԵԱՆԻ *և* Գ. ՄՈՒՐԱԴԵԱՆԻ *կազմած*

ՀԱՆՐԱՀԱՇԻՒ

(*ալգեբրա*)

դասագիրքը, որը բաղկացած է 440 *երեսից և ամփոփում է իր մէջ և խնդիրների հաւաքածուն:*

Գինն է 1 *ր.* 60 *կ.*

Վաճառվում է Թիֆլիսում, Միքայէլեան կամուրջի վրա, պ. ՏԷՐ ՂՈՒԿԱՍԵԱՆԻ *մանուֆակտուրային խանութում* (№№ 35—36). *օտարաքաղաքացիները կարող են դիմել այս հասցէով.* Тифлисъ. на Михайловскомъ мосту, магазинъ Теръ-Гукасова. передать Георгію Теръ-Гукасову.
2—3

ԵՐԵՒԱՆԻ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐԻԱՑՈՒՄ *աւարտած մի երիտասարդ* ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ՈՒՆԵՆԱԼ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ *ռուսաց պատմութեան և Ռուսաստանի աշխարհագրութեան* ՈՒՍՈՒՑՉԻ ՊԱՇՏՕՆ: *Հասցէն իմանալ կարելի է „Մշակի“ խմբագրատանը:*
1—3

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES

PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

(ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ *և* ԲԱԹՈՒՄԻ *մէջ և փոխադարձ:*

Հինգշաբթի, 13/25 *նոյտեմբերի,* ԲԱԹՈՒՄԻՑ *դուրս կը գնայ շոգենաւ* CAMBODGE (ԿԱՄԲՕԶ) *նաւապետ* REYNIER (ՐԷՆԷԻ) *դէպի Կ. Պոլիսև Զմիւռնիա և յարակցելով ելՖա, Պորտ-Սայիդ և Ալէքսանդրիա գնացող ընկերութեան շոգենաւերի հետ:*

Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ԲԱԹՈՒՄ *և* ԲԱԳՈՒ *պ. պ.* ԲՈՒՐԿՀԱՐԴԻ *և* ԸՆԿ. *իսկ* ԹԻՖԼԻՍՈՄ ԳԷՈՐԳ ՀԵԶՈՐԵԱՆ ՀԵԶՈՒԲԵԱՆՑԻ: 1—3

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

(N. PAQUET ET COM.)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ *և* ԲԱԹՈՒՄԻ *մէջ և փոխադարձ.*

Չորեքշաբթի, նոյեմբերի 12-*ին,* ԱՆԱՏՕԼԻԱ (ANATOLIE) *շոգենաւը, նաւապետ* ԲՕՇԵԼ (BOSCHEL) *դուրս կը գնայ* Բաթումից *դէպի* Տրապիզօն, Օրդու, Սամսօն, Կ. Պոլիս *և* Մարսէյլ: *Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին.* Բաթումում *պ.* Գարանիօնին *և* Թիֆլիսում *պ.* Բէնօին, *նախկին* Արծրունի *դպրեվանքում,* № 103. 3—4

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ, *սրանով յայտնում է ի գիտութիւն ընդհանրութեան, որ նոյեմբերի* 9-*ին,* 1886 *թվի, դումայի դահլիճում առաւօտեան* 9 *ժամին, տեղի կունենայ առաջին կարգի ձայնաւորների ընտրութիւնը* 1887—1890 *թ. քառամեակի համար:* 2—3

ՑՈՐԵՆԻ ԵՒ ԿԷՐՕՍԻՆԻ ՍԿԼԱԴ

Պատիւ ունենք յայտնելու, որ մենք բացած ենք Փոթի քաղաքում, Բիօն գետի վրա, ցորենի սկլադ, կէրօսինի բեռերվուար, և տակառներ ու ժեստեանկաներ պատրաստող գործարան

Ցորենի սկլադը, որ նոր ու ամուր չինութիւն է երկաթեայ ծածկոցով, բաղկացած է չորս բաժանմունքից, և կարող է զետեղել իր մէջ հարիւր վագոն հացահատիկ: Ցիշեալ սկլադը միացրած է մի կողմից Կովկասեան երկաթուղու, և միւս կողմից Սև ծովի նոր բուխտայի հետ, և ունի այնպիսի յարմարութիւններ, որոնք միջոց են տալիս ամենայն տեսակ ապրանքներ ստանալ և յանձնել նաւերին, ըստ որում ծախսն էլ ապրանքը վերափոխելու վրա էժան է նստում:

Մեր սկլադը կընդունէ իր մէջ ժամանակաւոր պահելու համար ցորեն և այլ հացահատիկներ ամեն ցանկացողից, վերցնելով մինչև 15 *օրվայ համար՝ փութին մէկ կօպէկ, կամ վագոնին* 6 *ռուբլ:*

Մեր սկլադը յանձն է առնում ստանալ ցանկացողից ցորեն և այլ հացահատիկներ ու վաճառել նրա համար, վերցնելով սկլադի օգտին փութին մէկ կօպէկ, կամ վագոնին 6 *ռուբլի, ըստ որում ապրանքը սկլադում մինչև* 10 *օր պահելու համար ոչինչ վճար չէ պահանջվում:*

Ցանկացողները վաճառել մեզ իրանց ցորենը կամ ուրիշ հացահատիկներ, պիտի ուղարկեն մեզ իրանց ապրանքի նմուշը (օբրազչիկ), որից յետոյ ապրանքը կը գնահատուի երկու կողմի համաձայնութեամբ:

Մեր նաւթագործարանը ոչինչ արգելք չի լինի ցորենի սկլադին որովհետև զետեղված է առանձին չինութեան մէջ և գտնվում է բաւական հեռու ցորենի սկլադից:

Մեր կէրօսին և տակառներ ու ժեստեանկաներ պատրաստող գործարանը նոյնպէս ունի ամենայն տեսակ յարմարութիւններ: Նա պատրաստում է էժան գնով տակառներ ու ժեստեանկաներ, և ընդունում է նորոգելու համար հին տակառներ ու ժեստեանկաներ:

Մենք յանձն ենք առնում կէրօսինը ընդունել ու ածել շատ շափաւոր գնով:

Մեր տակառագործարանը կարող է պատրաստել մեծ քանակութեամբ տակառներ, իսկ ժեստեանկաներ չինող մեքենաները առ այժմ կը պատրաստեն օրեկան 1,200 *ժեստեանկա, իսկ փոքր ժամանակից յետ աւելի մեծ քանակութեամբ:*

Ցոյս ունենք, որ մենք յանձնարարութիւններ կստանանք մեր երկրի վաճառականներից. մենք աշխատելու ենք յարաբերութիւն սկսել արտասահմանեան վաճառականների հետ և բաւականացնել մեր երկրացի վաճառականներին:

Մեզ առանձին պայմաններ առաջարկել կամեցողներին խնդրում ենք նամակով դիմել մեզ հետևեալ հասցէով.

Поти, Очагаву и Тараеву
8—10

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՅԼՏՒՈՒԹԻՒՆ ՍՏԱՑԱԾ

ՀՆԴԿԱԿԱՆ ՄԿՆԴԵՂ

ՄԻՇՈՒՆԱՑ

ՄԵԾ ԵՒ ՓՈՔՐ ՄԿՆԵՐԸ *կատարելապէս ոչնչացնելու համար:* Արկղիկի գինը 1 ր. 50 կ. Արկղիկի $^1/_4$ *արժէ* 60 կ.:

Հեղուկ բաղլինջների դէմ: Սրուակի գինը, վրձինով միասին 1 *ռուբլի:*

Լու, ցեց, բողոճ ոչնչացնելու փոշի: Գլխաւոր պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ գտնվում էվ. Գրիվնակի դեղատան ապրանքների մագազինում, «Լոնդոն» հիւրանոցի տակ, Զուբալովի տանը:

բակի գինը 1 *ր.* 20 *կ. գուտապէրչի մեքենան առանձին.* $^1/_2$ *դօրակ* 65 *կ.*

Սմբակային օծուն, Բիս Գուտմանի, ձիերի սմբակները ամեն օր օծելու համար, պահպանում է սմբակը ճաքելուց և նալելու միջոցին թուլանալուց: Դօրակի գինը 1 *ռուբլի:*

Կուղբի ճարպի օծուն, պահում է խոնաւութեան դէմ և կակուղ դրութեան մէջ՝ կօշիկները, բոտինները, ձիերի սանձերը: Գինը 75 *կօպ.*

Մազերի ներկ, սև, շագանակագոյն և չէկ: Մի անգամ ներկված մազերը իրանց գոյնը պահում են մինչև վեց շաբաթ: Ներկված մազերը չէ կարելի զանազանել բնական մազերից: Արկղիկը 3 *ռուբլի.*

Բիս. Գուտման

26—100

Дозволено цензурою, Тифлисъ 3 Ноября 1886 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовская у. д. наз.